ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2015թ. թիվ 12-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի
Ն 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով և 3-րդ մասով, հաշվի առնելով մարզպետարանի աշխատակազմում կատարված կադրային փոփոխությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2015թ. հունվարի 19-ի թիվ 6-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ» բառերը փոխարինել «հաշվապահական հաշվառման բաժնի պետ» բառերով;

2) «ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ - Դավիթ Թամարյան» բառերը փոխարինել «ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ - Դավիթ Թամարյան» բառերով:

2. Հավելվածը լրացնել նոր՝ 3-րդ կետով.

«3. Վարչական հսկողության արդյունքում նախատեսված արձանագրությունների կազմման, լրացված հարցաշարերի խմբավորման, պահանջվող տեղեկատվության փաստաթղթաշրջանառության և մարզպետարանի պաշտոնական կայքում տեղադրվելիք նյութի տրամադրման աշխատանքների պատասխանատու նշանակել մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Գոհար Բաղդասարյանին:»:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. հունվարի 22
ք.Վանաձոր